


"ԹՈՂ ՏՈՒԷՔ ՄԱՆՐ ՏՂՈՑԸ ՈՐ ԻՆԾԻ ԳԱՆ." ՂՈՒԿ. ԺԸ. 16.

ՀԱՏՈՐ ԻԳ. ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼԻՍ. ԱՊՐԻԼ 1, 1894 ԹԻՒ 4

## ՄԻՔԱՅԷԼ ԱՆՃԷԼՕ

Միքայէլ Անճէլօ հաւասարապէս անձ էր վասն զի նշանաւոր եղաւ երեք գեղարուեստներու մէջ։ Նշանաւոր քանդակագործ, նշանաւոր ճարտարապետ և նշանաւոր նկարիչ էր։ Ինքն ըսած է թէ նկարչութիւնը չէր իր գործը. բայց այն գործը որ զինք ճանչցնելու ամենէն աղէկ նպաստած է, ի Հռոմ Սիքսթին կոչուած մատուռին առաստաղին նկարն է, զոր սկսաւ 1508ին։ Գործին համար իրեն օգնական կանչեց կարգ մը վարժ նկարիչներ Ֆլորենցայէ. բայց գոհ չըլլալով անոնց ճարտարութենէն, բոլորն ալ արձակեց և գործն ինք լմնցուց առանձին։ Երեսը երկար ատեն վեր բռնելով գործել անշուշտ շատ դժուար բան էր. ուստի Միքայէլ Անճէլոյի աշխատութիւնը տևեց չորսուկէս տարի մինչև որ գործն ի գլուխ ելաւ։ Սիքսթին մատուռին պատկերները կը ներկայացնեն Հին Կտակարանէն տեսարաններ, սկսելով Արարչագործութենէն։

Այս մեծ նկարիչը ապրեցաւ մինչև իննսուն տարի, և իր մահուան ժամանակը Հռոմայ Ս. Պետրոսի մայր եկեղեցւոյն գլխաւոր ճարտարապետն էր։



ՄԻՔԱՅԷԼ ԱՆՃԷԼՕ

---

## "ԶԻՍ ՑԱՄԱՔ ՀԱՆԵՑԷՔ"

Բարի քարոզիչ մը ունէր անհոգ և ծոյլ որդի մը, որ թողլով տունը նաւով գնաց հեռու երկիր մը։ Իր վշտացեալ ծնողքը ուրիշ բան չէին կրնար ընել բայց միայն աղօթել անոր համար և բարի խրատներ գրել անոր։ Տղան տանող նաւը հասաւ հեռաւոր նաւահանգիստ մը ուր պիտի սպասէր նոր բեռներ առնելու համար։ Նաւաստիները ցամաք ելան և իրենց հետ նաւ բերին փոքր բնիկ տղայ մը որ կրնար քանի մը եղանակներ զարնել նուագարանով։ Տղան բաւական ժամանակ զանոնք զուարճացնելէն ետքը, "Հիմա զիս ցամաք հանեցէք," ըսաւ նաւաստիներուն։ "Տակաւին երթալու չես," ըսին նաւաստիները։ "Ո՛հ, լաւ որ չեմ կրնար մնալ հոս այլ ևս," պատասխանեց փոքրիկ սևամորթ տղան, "և ըսեմ պատճառը թէ ինչո՛ւ չեմ

կրնար մնալ։ Բարի քրիստոնեայ մի֊սիոնար մը մեր գեղն եկած է. անկէ սորված եմ ամէն ինչ որ գիտեմ Յիսուս Քրիստոսի վրայ. Նա գրեթէ այս ժամանակ կու գայ ծառի մը ներքեւ մեզի ուրիշ բաներ ալ պատմելու համար, կ'ուզեմ երթալ և լսել։" Նաւաստիները յաղթուեցան աղին աղաչանքներէն և խոկոյն թիավարելով տարին զնա ծովեզրը։ Քարոզիչին անմիտ որդին շարժեցաւ փոքրիկ հեթանոս աղին խօսքերէն, որոնցմէ դատապարտուած զգաց ինքզինք։ "Հօս եմ ես," ըսաւ ինքնիրեն, "Անգլիոյ քարոզիչներէն միայն որդին, որ շատ մը աւելի բան գիտեմ Յիսուսի վրայ քան այդ խեղճ տղան, և սակայն ո՛րչափ քիչ փոյթ ունիմ Անոր վրայ։ Այդ տղեկը հիմա մեծ փափաքով մտիկ կ'ընէ կենաց Բանին, մինչ ես բոլորովին անփոյթ եմ։" Մեծ մտատանջութեամբ իր կոխանկողինը գնաց այդ գիշեր։ Հոն իր միտքը եկան հօրը խրատները, որովք կը յորդորուէր թէ պէտք էր որ փնտռէր և գտնէր այն փրկութիւնը որուն շատ կարօտ էր։ Եղաւ անկեղծ քրիստոնեայ մը, և մեծ էր ուրախութիւնն Անգլիա իրենց տան մէջ երբ այդ բարի լուրը հասաւ հօրը և մօրը։

## ԹՐԱՖԱԼԿԱՐԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԸ

Թերևս արդի պատմութեան մէջ ամենէն համբաւաւոր ծովային ճակատամարտը այն է որ տեղի ունեցաւ 1805 Հոկտ. 21ին Անգլիոյ և Գաղղիոյ նաւատորմիղներուն մէջտեղ Թրաֆալկարի Գլխուն մօտ Սպանիոյ ծովեզերքը։ Պօնափարթ կ'ուզէր Անգլիոյ վրայ արշաւել և պատրաստած էր մեծ նաւատորմիղ մը որ ճամբայ պիտի ելլէր Թուլոնէ։ Նելսըն, Անգլիացի ծովակալը, երկու տարի փակեց այս նաւատորմիղը Թուլոնի նաւահանգստին մէջ, բայց յետոյ նաւատորմիղը խոյս տուաւ անկէ և անցաւ Ովկիանոսը որպէս զի օգնութիւն գտնէր Սպանիական նաւատորմիղէն որ այն ժամանակ կը գտնուէր Արևմտեան Հնդկաստան։ Նելսըն հալածեց Գաղղիական նաւատորմիղը Ովկիանոսին վրայ և իր վերադարձին հանդիպեցաւ անոր՝ Քատիսի մօտ ուր նաւահանգիստը մտաւ Գաղղիական նաւատորմիղը։ Նելսըն Գաղղիական նաւատորմիղը անկէ դուրս հանելու համար իր նաւերէն քանի մը հատը հեռացուց։ Յաջողեցաւ և ճակատամարտը տեղի ունեցաւ, և Անգլիացիք կատարեալ յաղթութիւն մը տարին, բայց Նելսըն սպաննուեցաւ։



ԹՐԱՖԱԼԿԱՐԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԸ

## ԵՐԵՔ ԵՐԻՏԱՍԱՐԴԱՑ ԸՆՏՐԱԾ ՃԱՄԲԱՆԵՐԸ

Ծերունի իմաստուն մը կը նստէր իր բնակարանին դուռը, և ահա երեք երիտասարդներ կ'անցնէին առջևէն։ «Բանի մը հետամու՞տ էք, տղաքս," ըսաւ անոնց։ «Ես հաճոյքին հետամուտ եմ," ըսաւ ամենէն մեծը։ «Իսկ ես՝ հարստութեան," ըսաւ երկրորդը։ «Հաճոյքը կը գտնուի հարստութեան մէջ միայն։" «Իսկ դո՞ւն, փոքրիկս," ըսաւ երրորդին։ «Ես Պարտականութեան հետամուտ եմ," ըսաւ նա համեստութեամբ։ Եւ իւրաքանչիւրը գնաց իր ճամբան։ Ծերունին ժամանակ մը յետոյ իր ճամբուն վրայ հանդիպեցաւ երեք մարդոց։ «Որդեակ իմ," ըսաւ անոնցմէ ամենէն մեծին, «կարծեմ դուն էիր հաճոյքը փնտռող երիտասարդը։ Ձեռք բերի՞ր զայն։" «Ոչ, հայր," ըսաւ մարդը. «Հաճոյքն է ցնորք մը որ կը փախչի երբ մարդ կը մօտենայ անոր։" «Որդեակ, դուն ուղիղ ճամբուն չհետևեցար։" «Դո՞ւն ինչ ըրիր," հարցուց երկրորդին։ «Հաճոյքը հարստութեան հետ չէ," պատասխանեց նա։ «Իսկ դո՞ւն," հարցուց ծերունին ամենէն փոքրին։ «Երբ կը քալէի Պարտականութեան հետ," պատասխանեց նա, «Հաճոյքը միշտ քովս կ'ունենայի։" «Միշտ այսպէս է բանը," ըսաւ ծերունին, «եթէ մարդ Հաճոյքին ետևէ իյնայ, չկրնար ձեռք բերել զայն։ Հաճոյքին ետևէն ինկողը անոր շուքը միայն կը ստանայ։" Հաճոյքը ձեռք ձեռքի կ'երթայ Պարտականութեան հետ, և անոնք որ Պարտականութիւնը կ'ընեն իրենց ընկեր, Հաճոյքն ալ կ'ունենան ընկեր։

## ԱԼՔՄԱԱՐ

Տղայոց Ա-ե-ու-բէ-ի մէջ առկէ առաջ դրուած պատկերներէն ոմանք ներկայացուցին Հոլանտայի քանի մը քաղաքները։ Այս պատկերը կը ներկայացնէ նոյն երկրին Ալքմաար քաղաքին մէկ մասը։ Ալքմաար Զայտէր Զէի արեւմտեան կողմի թերակղզիին վրայ է, և նման Հորնի, որ անկէ քանի մը մղոն միայն հեռի է, պանիրի համբաւաւոր վաճառանոց է։ Պատկերին կեդրոնը գտնուող շէնքը որու վրայ կը բարձրանայ այդ գեղեցիկ աշտարակը, այն է ուր պանիր կը կշռուին։ Գետնայարկին վրայ կան հին ժամանակի չորս հատ խոշոր կշիռներ (Բէլ-ու-) ներկուած այլ և այլ գոյներով, և բեռնակիրները կը դնեն գլխարկ նոյն գոյնով որով ներկուած է կշիռը որուն կը պատկանին իրենք։ Կշռին թաթին վրայ կը դրուի բեռ մը պանիր որ կշռուելէն ետև կ'առնուի ջրանցքին վրայ գտնուող նաւակին մէջ և կը տարուի նաւ։ Ալքմաար քիչ հրապուրիչ բան ունի բաց ի իր պանիրի արհեստագործութենէն և պատմութենէն։ Անոր գլխաւոր հրապարակին մէջ 1876ին կանգնուեցաւ արձան մը Ալքմաար Յաղթական կոչուած ի յիշատակ 2,000 քաղաքացիներու, որք իրենց պարիսպները Սպանիացի 16,000 կրթեալ զօրաց բանակի մը դէմ պաշտպանեցին, մինչև որ թշնամին ստիպուեցաւ վերցնել պաշարումը։



ԱԼՔՄԱԱՐ

---

## ԳԻՆԵՀԱՏ ԿԱՊԻԿԸ

Երբ կը դառնայինք Հնդկաստանէ, կ'ըսէ ճանապարհորդ մը, մեր նաւը խարխուխ նետեց Բարեյուսոյ Գլխուն առջև, վասն զի շոգենաւը ջուր առնելու պէտք ունէր, և մինչ կը մնայինք հոն, նաւաստիներէն մին գնեց կապիկ մը, շատ խաղուն բան մը, և ամէն ծիծաղաշարժ կերպարաններ և ձևեր առնելու կարող։ Նաւաստիները քանի մը օր զուարճացան, ծիծաղեցան կապիկին տեսակ տեսակ խեղկատակ ձևերը տեսնելով, բայց յետոյ ձանձրանալով անոնցմէ, նոր բան մը կը փնտռէին։ Նաւաստիներէն մին ըսաւ թէ բոլոր աշխարհի մէջ չկայ աւելի զուարճալի բան մը քան գինովցած կապիկ մը։ Ուստի երկու երեք գաւաթ օղի գնելով բաժակի մը մէջ և ըստ կարի ախորժելի ընելով զայն, տուին կապիկին։

Հարկաւ, բարի մարդ մը պիտի չուզէր որ կամօքին չարաչար վարուէր Աստուծոյ որ և իցէ մէկ արարածին հետ, և սակայն կապիկ մը գինովցընող մարդը աւելի ահաւոր մեղք կը գործէ և անբան անասունի աստիճանին կ'իջնէ։ Ինչ և իցէ, ինչ բարոյական յատկութիւն ալ ունենայ այս բանը, նաւին մէջ գտնուող ամէն մարդ շատ հետաքրքիր էր իմանալ թէ ըմպելիքը ի՛նչ ազդեցութիւն պիտի ընէր փոքրիկ կապիկին վրայ։ Բայց բոլոր դիտողներուն յոյսը գրեթէ պարապ ելաւ։ Աւա՛ղ, որ արբեցութեան տխուր տեսարանն այնքան հասարակ և հանրածանօթ է որ զուարճութիւն չտար մարդու։ Հարկաւ, կապիկին խաղերէն ոմանք քիչ մը ծիծաղաշարժ էին, և թերևս ներելի էր խնդալ անոր գինովութիւնը տեսնելով. վասն զի նա չէ բարոյական արարած, և կարող չէ մեղանչել։

Սակայն ըմպելիքը կրնայ նուաստացընել կապիկն անգամ։ Կենդանին առաջ խաղուն էր, այժմ շատ ապուշցած էր, և ճիշդ այնպէս ապուշցած ինչպէս գինովները կ'ապուշնան։ Եթէ կապիկը գիտնար թէ ինչպէս տխմար բան մը եղած էր, պիտի երթար անշուշտ և պահուըտէր ծածուկ տեղ մը։ Այս ցաւալի կատակը շուտով անցաւ, և գիշերը վրայ չհասած ամէն մարդ մոռցաւ զայն բաց ի կապիկէն։ Խեղճին գլուխը կը ցաւէր, ցաւ՝ զոր միայն գինովը գիտէ։

Քանի մը օր յետոյ ծովը խաղաղեցաւ, ուստի նաւաստիները պարապ էին։ Բայց մարդ միշտ կը փորձուի անգործութիւնը չարիքի առիթ ընել, ինչպէս այս պարագային մէջ։ Նաւաստիք որոշեցին քիչ մը աւելի զուարճանալ կապիկին միջոցաւ։ Նորէն պատրաստեցին ըմպելիքին խառնուրդը առջի պէս, և նաւաստիներէն մին բաժակը տուաւ կապիկին։ Նա հոտոտեց զայն, երեսը սատիկ ծամածռեց, ծաղրական կերպարանք մը առաւ, և յետոյ բաժակն իր պարունակութիւնով նետեց չիտակ նաւաստիին երեսը։ Յետոյ ելաւ ապաստանեցաւ կայմերուն և առագաստներուն վրայ։ Այս ապաստանարանէն սկսաւ բոլոր ուժովը կարկաչել բարձրաձայն աղաղակելով։ Տարակոյս չունիմ թէ անասնոց լեզուին ծանօթ անձ մը սապէս պիտի թարգմանէր անոր այն խօսքերը.

"Այո, ես գինովցայ անցեալ Երեքշաբթի։ Յիմար եղայ, և աւելի մեծ յիմարներ ծիծաղեցան վրաս։ Նախատինք բերի իմ բարի հօրս և մօրս վրայ, այո, բոլոր այն անմեղ և զգաստ կապիկներուն ցեղին վրայ որոց սերունդէն եմ ես։ Միայն ես եմ գինովցողն գերդաստանիս մէջ։ Ես աւելի աղէկ բան մը չէի գիտեր։ Բայց գիտեմ հիմա, և ոչ ոք երբեք նորէն պիտի խմցնէ ինձ։"

Բոլորս ալ ծիծաղեցանք բարձրաձայն կարկաչներուն վրայ, բայց նաւապետն ըսաւ, "Տղաք, Երեքշաբթի օրուան գինովութիւնը կապիկն ըրաւ խիստ զգուշաւոր գինեհատ մը. երանի՜ թէ բոլոր մեր նաւաստիներն օրինակ առնէին անկէ։"

## ՍՈՒԼՈՒՄՆԵՐԸ ԾԱՓԱՀԱՐՈՒԹԵԱՆ ՓՈԽՈՒԱԾ

Հանրութեան շատ սիրելի անձանց մին որ երբեք ուսուցիչ եղած են Էտինպուրկի Համալսարանին մէջ, է Ճոն Սթուարթ Պլէքի, որու ազնիւ նկարագիրը լաւ կը տեսնուի հետագայ պատմութեան մէջ.

Փրոֆէսոր Պլէքի կը դասախօսէր նոր կարգի մը որու վերաբերող աշակերտները աղէկ չէր ճանչնար։ Ուսանողներէն մէկը ոտք ելլալ գիրքի մը մէջէ պարբերութիւն մը կարդալու, գիրքը ձախ ձեռքը բռնած։ “Պարոն,” գոչեց Մր. Պլէքի, “գիրքդ աջ ձեռքդ բռնէ։” Եւ երբ աշակերտն ուզեց խօսիլ, “խօսք չեմ ուզեր, Պարոն, աջ ձեռքդ, կ՚ըսեմ։” Աշակերտը վերցուց իր աջ բազուկը, որ կը վերջանար խեղճին դաստակին (պէլէ+) վրայ։ “Տէր, ես աջ ձեռք չունիմ,” ըսաւ։ Մր. Պլէքի դեռ բացած չէր իր բերանը, և ահա սուլելու փոթորիկ մը բրդաւ, այնպէս որ անլսելի կ՚ըլլար անոր ձայնը։ Այնուհետև փրոֆէսորը վար իջաւ իր տեղէն, գնաց աշակերտին քով զոր վիրաւորած էր առանց գիտնալու, դրաւ բազուկը պատանիին ուսին վրայ, և իր կուրծքին վրայ քաշեց զնա։ “Տղաս,” ըսաւ Մր. Պլէքի շատ մեղմութեամբ, բայց բաւական յստակ կերպով այնպէս որ լաւ կը հասկցուէր իր խօսածը դասարանին այն շշնջիւններուն մէջ. “տղաս, ներէ ինծի իմ խստութեանս համար. չէի գիտեր, չէի գիտեր։” Տղաքը երբ տեսան փրոֆէսորին ըրածը, սկսան ծափահարել, և Մր. Պլէքի հասկցաւ թէ Սկովտացի տղայք կրնան ծափահարել, ինչպէս կրնան սուլել, և դառնալով աշակերտներուն, ըսաւ այնպիսի նայուածքով և ձայնով որ ուղղակի սրտէն կու գար. “Եւ ըսեմ ձեզի ամենուդ, Ուրախ եմ որ ուսուցիչ եմ ազնուականներու խումբի մը։”

## ՇԻՏԱԿ ՆՍՏԷ

Կռնակի ոսկորդ տակառի շրջանակի համար շինուած չէ. ուրեմն մի ծռեր զայն, այլ՝ շտկէ։ Աստուած մարդը շիտակ ստեղծեց, ոչ թէ կլոր ուսերով, ծուռ կռնակով։ Եթէ սերտողութիւն ըրած կամ ուսման պարապած ժամանակդ շատ կը ծռիս, աւելի ցած նստարան մը գործածէ։ Սղոցելով կարճցուր հին աթոռի մը ոտքերը այնպէս որ անոր վրայ նստած ժամանակ կզակդ քիչ մը վեր մնայ գրասեղանէն։ Աթոռին ետևի ոտքերը քիչ մը աւելի կարճ թող ըլլան։ Կարդա և գրէ բազուկներդ դնելով գրասեղանին վրայ, և բաւական պիտի շտկէ կռնակիդ ծռութիւնը։

Մայր մը, որուն դուստրը ծռելու ունակութիւնն ունէր, սովոր էր առանց բարձի պառկեցնել զնա կռնակի վրայ օրը ժամ մը, մինչ նա իրեն կը կարդար հետաքրքրաշարժ գիրք մը։ Քիչ ժամանակէն աղջկան մարմնոյն ծռութիւնը շտկուեցաւ, և եղաւ օրինակ առողջութեան և զօրութեան։

Կան երկիրներ ուր կանայք իրենց գլխուն վրայ կը կրեն դոյլերը, տաշտերը և ծանր բեռները. և ասոր կ՚ունենան ուղիղ մարմին։ Ուղիղ դիրք ունենալու կ՚օգնէ նաև բազուկներն ետև բռնելը։ Միտք պահէ որ կեանքիդ վրայ տարիներ կրնաս աւելցնել ուղիղ կանգնելով. և ոչ միայն աւելի երկար կեանք պիտի ունենաս, այլ աւելի զօրաւոր, երջանիկ և օգտակար կեանք, եթէ քալելու ատեն գլուխդ շիտակ պահես, կուրծքդ ընդարձակուած, և թոքերդ լաւ զարգանալու նպաստաւոր վիճակի մէջ. նաև պիտի ունենաս վարդագոյն այտեր և թարմ գոյն, եթէ չքալես մարմինդ ծռելով, կուրծքդ տափակցնելով, որով կ՚ըլլաս տժգոյն, հիւանդոտ և թըշուառ։

Յիշէ որ “Աստուած մարդը ուղիղ ստեղծեց։”

## ՊԱՏԱՍԽԱՆԵԼ ՍԿԵՊՏԱԿԱՆՆԵՐՈՒ

Տաղանդաւոր մարդ մը երեկոյ մը կը ճաշէր քանի մը անաստուածներու հետ։ Այս փիլիսոփաները կ՚ըսէին թէ կ՚ուրանան Աստուծոյ գոյութիւնը, բայց նա լուռ կը կենար։ Իր կարծիքը հարցուցին, և մինչ կը խօսէին, պատի ժամացոյցը զարկաւ։ Պատասխանեց ժամացոյցը ցուցնելով, “Ժամացոյցները իրենքզիրենք չեն շիներ։”

Անհաւատ մը կը ջանար համոզել տիկին մը թէ աշխարհի մէջ ամէն բան ինքիրմէ եղաւ և ոչ թէ ստեղծուեցաւ։ “Ըսէ ինծ ուրեմն,” պատասխանեց տիկինը, “ո՞րն առաջ ինքիրմէ եղաւ, հաւկիթն ածող հա՞ւը թէ հաւն յառաջ բերող հաւկիթը։”

Տիկին մը ընկերութեան մը մէջ կը տեսակցէր յայտնի անաստուածութիւն դաւանող անձի մը հետ որ շատ բաներ խօսեցաւ իր Աստուծոյ չհաւատալուն վրայ։ Երբ իրեն համախոհ մարդ չգտաւ անաստուածը, անհամբերութեամբ գոչեց, “Չէի կարծեր թէ իմացական էակներու մէջ ես միայն պիտի գտնուէի Աստուծոյ չհաւատացող։” “Ներեցէք, Պարոն,” ըսաւ տիկինը, “մինակ չէք, իմ կատուս և շունս որ հոն կը պառկին փոխաթին վրայ, տգէտ են քեզ նման, միայն սա տարբերութեամբ որ այդ խեղճ անբանները չպարծելու իմաստութիւնն ունին։”

Դաւթի ժամանակ խենթը ըսաւ իր սրտին մէջ թէ “Աստուած չկայ։” Այդ խենթը հիմա աւելի մեծցած և աւելի համարձակ է, և այդ յիմարութիւնը կը խօսի մարդոց առջև։

## ՀԱՆԵԼՈՒԿ ՍՈՒՐԲ ԳԻՐՔԷՆ

### ՍՈՂՈՄՈՆԻ ՄԷԿ ԱՌԱԿԸ

Որ կը բաղկանայ 56 տառերէ

[Եթէ գտնէք թուանշաններուն ներկայացուցած գիրերը որ առաջարկեալ հանելուկին տառերն են, կ՚ամբողջանան բանալիները, որք, բաց ի վերջինէն, Սողոմոնի Առակներէն քաղուած են։]

—o—

1. 44. 22. 9. 3. 30. 50. տուողը կարօտ չըլլար։

33. 20. 28. 15. 3. 48. 24. 36. մարդը զօրաւոր կ՚ըլլայ։

38. 21. 3. 43. 49. 41. 34. 37. 42. 16. 19. պահողը իր հոգին կը պահէ։

13. 14. 52. 46. 35. 55. 19. զսպողը իմաստուն է։

53. 51. 31. 37. 2. 39. 10. 30. 3. մարդը ձեռքը կու տայ։

31. 17. 44. 6. 32. 5. 23. 18. 19. բերնովը իր դրացին կը կործանէ։

32. 27. 33. 25. 54. 40. շրթունքները քեզմէ հեռացուր։

8. 33. 10. 21. 47. 45. 17. 25. 4. 40. 12. կռնակին գաւազան պէտք է։

7. 26. 46. 56. Հայերէն ձայնաւոր տառեր են։

ՅՈՎՍԷՓ ՀԱՅԿԱԶՆ

Կ. Պոլիս

Ամերիկայի Միսիոնարաց Ընկերութեան կողմէն.
Արտօնատէր [illegible]
Տնօրէն—Խմբագիր [illegible]
Ցինճանճըլար [illegible] խան



ԿՈՍՏ[illegible]
Ի ՏՊԱՐԱՆԻ Ռ. ՍԱՀԱԿ ՊՕՅԱՃԵԱՆ